ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2023 թվականի N 1160-Ա

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ <<ԳԱՌՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 1159-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանով հաստատված հավելվածի 1-ին և 10-րդ կետերի պահանջով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2023 թվականի դեկտեմբերի 21-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական շենքում անցկացնել Գեղակերտ գյուղի <<Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ՝ համաձայն հավելվածի:

2. Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի <<Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի միջոցով և այն իրականացնելու համար նախատեսված դրույթների կատարման անմիջական պատասխանատու նշանակել Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Առաքելյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայանքապետարանի աշխատակազմի քարտուղարի (Ա. Առաքելյան)՝ Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի <<Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել www.azdarar.am հասցեում

գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային, պետական լիազոր մարմնի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև Խոյի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում՝ մրցույթն անցկացնել, ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ և փակցնել համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի փոխարինողի 2023 թվականի նոյեմբերի 10-ի <<Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի <<Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին>> թիվ 1159-Ա որոշումը

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 13
Խոյ համայնք, գ. Գեղակերտ